

## Շախմատի միջազգային վարպետի հեծանվարչավը՝ հանուն ՔՈԱՖ-ի

ԵՐԵՎԱՆ – ՖԻԴԵ-ի կանանց միջազգային վարպետ Արիանա Կաոիլին սեպտեմբերի 21-ին՝ **Հայաստանի անկախության օրը**, մեկնարկ է տալիս երկշաբաթյա **հեծանվարչավի**:

*«Միշտ էլ հետաքրքրվել եմ հնագույն պատմությամբ, հատկապես հայոց պատմությամբ, և, ընդհանրապես, այս տարածաշրջանով: Ու մտքովս անցավ, «Ինչու՞ հեծանվով չանցնեն արևմուտքից արևելք կամ հակառակը: Կարելի է ձամփորդել ամբողջ տարածաշրջանով և ընդգրկել այս բոլոր հետաքրքիր պատմական ու հնագիտական վայրերը...»,- ասում է Արիանա Կաոիլին:*

Հայ գրոսմայստեր Լևոն Արոնյանի կինն իր հեծանվային շրջագայությունը կսկսի Կիլիկիայի միջնադարյան հայկական Այաս քաղաքից, կանցնի Անատոլիայով ու Իրանի հյուսիսով ու կավարտի հայ-իրանական սահմանին տեղակայված Ագարակ քաղաքում: Ճանապարհին Արիանան կանգառներ կանի Ադանա, Սիս, Այնթապ, Տարսուն, Ուրֆա, Դիարբեքիր, Վան, Բայազետ և Մակու բնակավայրերում:

Հեծանվարչավի շնորհիվ Արիանան դրամահավաք է իրականացնում Հայաստանի մանուկներ հիմնադրամի՝ Տավուշի մարզի շահառու սահմանամերձ գյուղերի համար: Հավաքվելիք 5,500 ԱՄՆ դոլարը կծառայի 6 գյուղերի սպորտային խմբակների ստեղծմանը, սարքավորումների ձեռքբերմանը և ուսուցիչների աշխատանքին:

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (ՔՈԱՖ) հոգեհարազատ է Արիանային, քանի որ հնարավորություն ա տալիս գյուղաբնակ երեխաներին բարձրացնել իրենց կյանքի որակը և մեծ նվաճումներ ունենալ:

Արիանայի հեծանվարչավը նկարահանվելու է GoPro շարժական համակարգով ու ակտիվորեն ներկայացնելու է ՔՈԱՖ-ի սոցիալական մեդիայի հարթակներում: «Կոնվերս բանկը» հովանավորում է բարեգործական արշավին առնչվող որոշակի ծախսեր:

Արիանա Կաոիլիի բարեգործական հեծանվարչավին կարելի է միանալ **#bike4coaf** հեշթեգով, նաև սեփական ներդրումը կատարել հետևյալ հղմամբ՝  
<https://www.gofundme.com/arianne-caoili-bike4coaf>

\*\*\*

*Ֆիլիպինյան ծագումով ավստրալացի շախմատիստուհին ՖԻԴԵ-ի կանանց միջազգային վարպետ է: Արիանա Կաոիլին տեղափոխվել է Երևան 2013 թ. և միանգամից ներգրավվել ձեռնարեցության ու բարեգործության ոլորտներում: Արդեն 3 տարի անց Երևանում հիմնադրել է «Ձամփորդ» շաբաթաթերթը, որի գլխավոր խմբագիրն է: Նաև «Ձամփորդ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, որը աջակցում է քաղաքացիական հասարակության ձևավորմանը և հայ լրագրողների վերապատրաստումներին:*

*Սիրում է լատինաամերիկյան պարեր, երգում է, գրում երգեր: Սիրում է հայկական խոհանոցը, հատկապես խորովածը, ինչպես նաև գյուղական սնունդը, որը քաղաքում չես գտնի:*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ ԳԻՄՆԱԴՐԱՄ

*Հետաքրքրվում է հայոց պատմությամբ, կարդացել է բազմաթիվ գրքեր Հայաստանի մասին: Մագիստրոսական թեզը վերաբերում է Հայաստանի և Ռուսաստանի գործարար հարաբերություններին: Մի քիչ խոսում է հայերեն:*

\*\*\*

***Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF)** բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Պեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:*

*2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնությունը: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:*

\*\*\*

*«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն 25-ամյա պատմություն ունեցող դինամիկ զարգացող բանկ է, որն առաջարկում է բազմատեսակ ծառայություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Բանկի կայուն զարգացումը պայմանավորված է թափանցիկ գործունեության և կշռադատված ֆինանսական կառավարման քաղաքականությամբ:*

*Բանկի դինամիկ զարգացումն ապահովվում է բարձրակարգ արհեստավարժ անձնակազմով, որի շնորհիվ Բանկն ի վիճակի է արագորեն արձագանքել շուկայում տեղի ունեցող փոփոխություններին՝ հաճախորդներին շարունակաբար առաջարկելով նորանոր հարմար ու հետաքրքիր բանկային ծառայություններ:*